



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի №...Ա  
քաղ. Երևան

**«ՀԱՅԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ №9/1-178 ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի №37Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ  
ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի փետրվարի 9-ի №37Ա որոշմամբ «ՀԱՅԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված №9/1-178 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգվել է և շարադրվել նոր խմբագրությամբ (ռադիոհաճախականության օգտագործման №0908 թույլտվություն),

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ,

գ) Օրենքի 10-րդ մասի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն Օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,075 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար: Մինչև 2018 թվականի հունվարի 2-ը գործող խմբագրությամբ նույն մասի համաձայն՝ նախատեսվել է

գանձել տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

դ) Ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 6-ի №ԱԲ-1773Հ, հոկտեմբերի 3-ի №ԱԲ-2580Հ, 2018 թվականի հունվարի 10-ի №ԱԲ-029Հ և ապրիլի 4-ի №ԱԲ-665Հ գրություններով,

ե) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №357Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 483 775 (չորս հարյուր ութսուներեք հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

զ) Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի №411Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 238 425 (երկու հարյուր երեսունուրեք հազար չորս հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

է) Ընկերության կողմից Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականության օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2018 թվականի մայիսի 24-ին Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2018 թվականի մայիսի 24-ի №ԱԲ-1160Հ գրությամբ,

ը) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, որը 2017 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2018 թվականի մայիսի 29-ն ընկած ժամանակահատվածի դրությամբ կազմում է 235 719 (երկու հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր տասնինը) դրամ,

թ) 2018 թվականի մայիսի 29-ին Ընկերությունը դիմել է Հանձնաժողով՝ ռադիոհաճախականության օգտագործման №0908 թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, և

հիմք ընդունելով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից 2005 թվականի դեկտեմբերի 29-ին Ընկերությանը տրամադրված ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախականության հատկացման №9/1-178 թույլտվությունը,

2) Հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 9-ի «ՀԱՅԿ ԱԲԴԱՀԱՄՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №9/1-178 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №37Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման №0908 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով 2017 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2018 թվականի մայիսի 29-ը հաշվարկված 235 719 (երկու հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր տասնինը) դրամ պարտքը, որից 181 868 (հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր վաթսուներթ) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 53 851 (հիսուներեք հազար ութ հարյուր հիսունմեկ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:

3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.

- 1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
- 2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
----- 2018թ.